

ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ԻՆՏՐՈՒԶԻՎ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱԿԱՆ-ՊԵՏՐՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

© 2004 թ. Հ. Պ. Գույումջյան*, Ա. Ա. Ավագյան**

*Երևանский Государственный Университет, Геологический Факультет
375025, Ереван, ул. Алека Манукяна 1, Республика Армения,

**Институт Геологических наук, НАН РА
375019 Ереван, пр. Маршала Баграмяна 24а,
Республика Армения

Поступила в редакцию 22.10.2003 г.

Հոդվածում տրվում է Մեղրի-Բարգուշատ մագմատիկ հանգույցի բարձր դեկորատիվ հատկանիշներով և բազմազան գույներով օժտված ինտրուզիվ ապարների բնութագրումը, պետրոգրաֆիական կազմը, ստրուկտուրային-տեքստուրային հատկանիշները և մագմատիկ ճեղքավորվածությունները, լուսաբանվում են Չանգեզուրի ինտրուզիվ ապարների արդյունաբերական մշակման հարցերը որպես դեկորատիվ – երեսապատման քարեր:

Չանգեզուրում գտնվում են Հայաստանի ինտրուզիվ ապարների ամենամեծ զանգվածները ավելի քան 1000 կմ² ընդհանուր մակերեսով: Մեղրու բաթոլիտի մերկացված մասի մակերեսը 800 կմ² է Արաքս գետի ձախ ափին, իսկ Բարգուշատի խմբի ինտրուզիվների՝ 250 կմ² (Гукасян, Меликсетян, 1965; Адамян, 1966; Мкртчян и др., 1969; Гуюмджян, 1973; Карамян, Таян, 1974; Баласанян, 1975): Այստեղ տարածված են տարբեր մագմատիկ ֆորմացիոն տիպերին պատկանող ապարները, սկսած գերիիմքային, հիմքային ապարներից մինչև թթու և ալկալային: Նշանակալի մակերեսներ են գրավում (50–100 կմ² և ավելի) գրանոդիորիտները, սիենիտները, նեֆելինային սիենիտները, գաբրոները, որոնք կարող են օգտագործվել որպես հումք շինարարության և ճարտարապետության բոլոր մարզերում: Ինտրուզիվ ապարներից պատրաստված երեսապատման սալերը կամ պատերի շարվածքի քարերը դեկորատիվ են, բացառիկ գեղեցիկ, ամուր և դիմացկուն գործնականում անսահմանափակ ժամանակի ընթացքում:

Վերջին տարիներին բնական և արհեստական դեկորատիվ քարերի օգտագործումը Հայաստանում մեծ թափ ստացավ հասարակական և անձնական նշանակության շենքերի պատերի և հատակների երեսապատման համար: Գրանիտանման ապարները շինարարության մեջ ըստ էության վերսկսեցին օգտագործել 90-ական թվականների կեսերից: Մինչ այդ խորհրդային տարիներին դեկորատիվ – երեսապատման քարերը (գրանիտ, մարմար և այլն) օգտագործվում էին բացառապես պետական և հասարակական նշանակության շինություններում, մեծ մասամբ ներքին հարդարման համար: Այսօր բարձրարժեք դեկորատիվ – երեսապատման քարերը դուրս են եկել փողոց: Նրանցով հարդարվում են ոչ միայն առաջին հարկի բարձրությամբ պատերը, այլ շենքն ամբողջ բարձրությամբ երեք կողմից, ընդհուպ մինչև շինության մերձակա հարթակը, աստիճանավանդակը, մայթերը և այլն: Չարմանալի և անսպասելի իրողություն աղբատ երկրների շարքում հայտնված երկրի համար:

Հարկ է նշել, որ դեկորատիվ – երեսապատման քարերը շատ երկրների համար համեմատաբար հազվագյուտ օգտակար հանածո են և թանկ: Լավագույն քարերը ստացվում են եզակի հանքա-

վայրերից: Այս դեկորատիվ քարերի բարձր գինը թույլ է տալիս տեղափոխելու մեծ հեռավորության վրա (Белков и др., 1975):

Մեղրի-Բարգուշատ մագմատիկ հանգույցների գրանիտոիդները և գաբրոիդները չնայած իրենց դեկորատիվ – գեղագիտական և ֆիզիկամեխանիկական բարձր հատկանիշներին մինչև այժմ չեն օգտագործվել որպես հումք դեկորատիվ սալերի արտադրության համար: Վերջին տարիներին պահանջարկը նման քարերի նկատմամբ աճել է և մոտակա տարիներին ավելի կաճի: Այս պատճառով անհրաժեշտություն է զգացվում ստեղծելու Հայաստանում, մասնավորապես Չանգեզուրում, դեկորատիվ քարերի ամուր և հզոր ինդուստրիալ բազա:

Քարային ճարտարապետությունը բնորոշ է Հայաստանի համար նրա պատմության ամբողջ ընթացքում: Որպես շինաքար պատերի շարվածքի համար և դեկորատիվ-երեսապատման քար օգտագործվել են հիմնականում հրաբխային ծագման ապարները՝ տուֆերը և բազալտները: Ինտրուզիվ ապարներն առաջին անգամ մասսայական կիրառում ստացան Հայաստանում մետրոյի շինանարարության մեջ՝ մարմարին գրեթե հավասար, մեծ մասամբ հատակների սալապատման համար (Փամբակի գրանոդիորիտները և կվարցային դիորիտները): Իսկ վերջին տարիներին ինտրուզիվ ապարները որպես դեկորատիվ-երեսապատման քար սկսվեցին օգտագործվել շինարարության մեջ ամենուր՝ հյուրանոցների, ռեստորանների, բարերի, խաղասրահների, մթերային և արդյունաբերական ապրանքների շքեղ խանութների ներքին և արտաքին երեսապատման համար, առանձնատների, ամառանոցների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների մշակութային կենտրոնների շինարարության մեջ և այլն: Նկատի ունենալով թանկարժեք դեկորատիվ քարերի մասսայական կիրառումը շինարարության մեջ կարևոր է դառնում շուկայի հարցը: Առ այսօր դեկորատիվ-երեսապատման քարերը ներկրվում են արտաքին շուկաներից, մոտ և հեռավոր երկրներից, թեև վերջին շրջանում նկատվում է որոշ աշխուժացում տեղական արտադրության դեկորատիվ-երեսապատման քարերի կիրառման ասպարեզում:

Դեկորատիվ-երեսապատման քարերին վերագրում են այն ապարները, որոնց հիմնական

հատկություններն են բարձր դեկորատիվությունը և բարձր ֆիզիկական-մեխանիկական հատկությունները, ինչպես նաև ունակությունը երկարատև, գործնականում անսահմանափակ ժամանակի ընթացքում դիմակայելու եղանակի փոփոխություններին և մթնոլորտային ազդեցություններին: Այս քարերին ներկայացվում են առհասարակ ամենաբարձր պահանջները համեմատած այլ տիպի քարերի (Белков и др., 1975; Лашук, 1996):

Հոդվածի նպատակը ուշադրություն հրավիրելն է բարձրորակ դեկորատիվ-երեսապատման քարերի հումքի առկայության վրա Ջանգեզուրում, ցույց տալ այս տեղական դեկորատիվ քարերի մեծ ընտրությունը ըստ գույնի, ստրուկտուրային-տեքստուրային առանձնահատկությունների:

Ինտրուզիվ ապարների կարևորագույն ֆիզիկական-մեխանիկական հատկությունները (ամրություն, տեսակարար և ծավալային կշիռ, ծակոտկենություն, կարծրություն, ցրտադիմացկունության գործակից, ազատ և հարկադրական խոնավատարություն, առածգականություն, մաշելիության աստիճան և այլն) հայտնի են, տարբեր տարածքների ու հասակների նույնատիպ ապարների միջև էական տարբերություններ չկան և ցանկացած թարմ ինտրուզիվ ապար ունի նպաստավոր հատկանիշներ օգտագործելու համար որպես շինարարական և ճարտարապետական քար: Պահանջները քարերի նկատմամբ փոխվում են նրանց օգտագործման ոլորտից և բնույթից կախված շինարարության մեջ և հատուկ կառույցներում՝ ծովափնյա, գետափնյա և ամբարտակների պատնեշներ ու պատվարներ, կամուրջների խարիսխներ: Բայց քանի որ խոսքը միայն դեկորատիվ քարերը շինարարության մեջ օգտագործելն է, որտեղ չեն պահանջվում բացառիկ ֆիզիկական-մեխանիկական հատկանիշներով ապարներ, ապա կարելի է բավարարվել ինտրուզիվ ապարների մասին գրականության մեջ գոյություն ունեցող ընդհանուր հատկանիշներով, որոնք այս տիպի ապարների համար դրական են բոլոր առումներով: Մաշելիության աստիճանի գնահատման համար լավագույն օրինակը տալիս է Մոսկվայի մետրոն, որի սալահատակման համար օգտագործվել են ինտրուզիվ ապարների սալեր մետրոի բազմաթիվ կայարաններում: Արդեն ավելի քան 60 տարի այս դեկորատիվ քարերը արդարացնում են իրենց որպես հատակի սալեր և մաշվածության էական նշաններ չեն ցույց տալիս (Белков и др., 1975):

Գրանիտների ամրության սահմանը 1200-3000 կգ/սմ² է, իսկ Փամբակի գրանոդիորիտների և կվարցային դիորիտների՝ 1576-2044 կգ/սմ² չոր վիճակում: Համեմատության համար նշենք մի քանի այլ ապարների ամրության սահմանները՝ հիմքային և գերհիմքային ապարներ 1800-2000 կգ/սմ², հրաբխային տուֆեր 50-200 կգ/սմ², բազալտներ, դիաբազներ 300-2300 կգ/սմ², մարմարներ 500-1900 կգ/սմ², տրավերտին 500 կգ/սմ²: Շինանյութերից ամենաբարձր ցրտադիմացկունություն ունի գրանոդիորիտը, իսկ ամենացածրը տրավերտիններինն է: Հիմքային-գերհիմքային ապարների, հրաբխային տուֆերի, բազալտների ցրտադիմացկունությունը բավարար է, իսկ կրաքարերի և մարմարների՝ բարձր չէ (Белков и др., 1975; Лашук, Усачева, 1996):

Ջանգեզուրի գրանիտանման ապարները բնորոշվում են գույների բազմազանությամբ՝ բաց մոխրագույն և սպիտակավուն վարդագույն երանգով (Լեռնաշենի և Գեղիի գրանիտոիդները), բաց և մուգ վարդագույն (Ախլաթյանի և Նոր-Արեիկի գրանոսիենիտները, գրանոդիորիտները), բաց մոխրագույն (Գեղիի, Լեռնաշենի, Կովչուտի կվարցային դիորիտները), սպիտակավուն վարդագույն երանգով (Ողջիի պորֆիրանման միջահատիկ գրանոդիորիտները), բաց վարդագույն (Ողջիի պորֆիրանման գրանիտները), սև և մոխրավուն (Գեղիի, Արամազդի, Սվարանցի, Մեղրիի գաբրոները և մոնցոնիտները), բաց մոխրագույն – սպիտակավուն վարդագույն երանգով (Ողջիի խոշորահատիկ պորֆիրանման գրանոդիորիտները), սպիտակ (Ողջիի մանրահատիկ ապլիտանման գրանիտները), բարձր ֆիզիկա-մեխանիկական հատկություններով (ապարների թարմությունը և համասեռությունը թույլ են տալիս սա հաստատելու), որոնք պայմանավորում են այս ապարների լայն կիրառումը որպես դեկորատիվ – երեսապատման և ճարտարապետական-շինարարական նյութ, որպես շարվածքի քար գանգան հասարակական շինարարական կառույցներում: Բոլոր ինտրուզիվ զանգվածների համար բնորոշ է լավ արտահայտված մագմատիկ ճեղքավորվածությունը (անջատման ճեղքերը), որոնք ապարը բաժանում են տարբեր չափերի զուգահեռանիստ բլոկների՝ մինչև մի քանի մետր երկարության և ավելի քան մեկ քառ. մետր կտրվածքով: Ինտրուզիվ ապարների ստրուկտուրային-տեքստուրային առանձնահատկությունները, միներալային կազմը (պլագիոկլազ, օրթոկլազ, կվարց և ամֆիբոլ գրանիտոիդներում, պլագիոկլազ, պիրոքսեն կամ օլիվին գաբրոիդներում) և տարբեր գունային երանգները այս ապարներին տալիս են տարբեր գեղագիտական որակներ, պայմանավորում տարածքի քարատեսակների բարձր դեկորատիվությունը և կիրառումը որպես երեսապատման ինքնատիպ քարեր:

Դեկորատիվությունը երեսապատման քարերի կարևոր որակական հատկանիշ է: Այն որոշելու համար օբյեկտիվ չափանիշներ չկան, իսկ այսպիսի գնահատականները միշտ սուբյեկտիվ են: Գրանիտոիդների համար առավել դեկորատիվ են մաքուր, առանց քսենոլիտների, համասեռ, հավասարահատիկ, մուգ կարմիր, վարդագույն, մոխրագույն, բաց մոխրագույն և սպիտակավուն վարդագույն երանգով տեսակները: Հատուկ դեկորատիվություն ունեն բաց գույնի, լեյկոկրատ, առանց գունավոր միներալների ապլիտանման գրանիտները և ալյասկիտները, որոնց բազմաթիվ ելքեր հայտնի են Ողջիի զանգվածի սահմաններում:

Բարձր դեկորատիվությամբ առանձնանում են Ողջիի զանգվածի և Շենաթաղի պորֆիրանման գրանոդիորիտները ու գրանիտները: Սրանք սպիտակավուն, բաց մոխրագույն, վարդագույն երանգով խոշորահատիկ ապարներ են կալիշլյատի և ալբիտ-օրթոկլազի պորֆիրանման մեծ բյուրեղներով (1x2սմ, 2x3սմ, 3x4 սմ չափերի): Կալիշլյատի վարդագույն բյուրեղները երիզված են ալբիտի բարակ 1-3 մմ պատյանով: Ջանգեզուրի պորֆիրանման գրանոդիորիտները ավելի զվարթ և տաք տեսք ունեն, քան առանց վարդագույն օրթոկլազի բյուրեղների պորֆիրանման նմանատիպ

այլ ապարները, որոնք ներկրվում են այլ երկրներից՝ Վարդագույն կալիչպատի փոքր և մեծ բյուրեղների տարբեր քանակությունը գրանոդիորիտներում ստեղծում է դեկորատիվ լայն բազմազանություն: Յուրատեսակ դեկորատիվ են Ողջիի զանգվածի առաջին ինտրուզիվ ֆազի վարդագույն պորֆիրանման գրանիտները օրթոկլազի համեմատաբար մեծ բյուրեղների առատության պատճառով (0.2x0.5 սմ, 0.5x1.0 սմ չափերի): Յուրատեսակ դեկորատիվ են նաև սաքարյան տիպի միջահատիկ պորֆիրանման գրանոդիորիտները (Ողջիի երկրորդ ինտրուզիվ ֆազ), հավասարահատիկ, սպիտակ մեղմ վարդագույն երանգով հիմնական զանգվածի մեջ նոսր դասավորված օրթոկլազի վարդագույն մեծ բյուրեղներով: Իսկ Լիճքի տիպի (Ողջիի ինտրուզիվ երրորդ ֆազ) պորֆիրանման գրանոդիորիտները սպիտակ ալբիտ-օլիգոկլազի և վառ վարդագույն օրթոկլազի պորֆիրանման բյուրեղների առատությամբ միջահատիկ հիմնական զանգվածի ֆոնի վրա, որը կազմված է կվարցից, օրթոկլազից, պլազիոկլազից, ամֆիբոլից և բիոտիտի ոչ մեծ քանակությունից, իրենց տեսքով, դեկորատիվությամբ առանձնանում են տարածքի բոլոր տիպի գրանոդիորիտներից:

Ինքնատիպ և գեղեցիկ տեսք ունեն մուգ վարդագույն, խոշորահատիկ, թույլ պորֆիրանման տեքստուրայով Ախլաթյանի զանգվածի գրանոսիենիտները: Այս ապարների մեջ կալիչպատի քանակությունը երկու անգամ գերազանցում է պլազիոկլազի սպիտակ-մոխրագույն բյուրեղներին: Դաշտային շպատների միջև երեւում են պիրոքսենների կանաչավուն և կվարցի թափանցիկ անգույն բյուրեղները:

Ամենատարածված դեկորատիվ քարերը Գեղիի, Լեռնաշենի, Արևիսի, Նոր-Արևիկի և Վարդանաձորի զանգվածների գրանիտոիդային ապարներն են: Այս ինտրուզիվ զանգվածների գրանոդիորիտները միջահատիկ կամ մանրահատիկ, սպիտակ, բաց մոխրագույն վարդագույն երանգով ապարներ են և կազմված են պլազիոկլազից, օրթոկլազից և փոքր քանակության մուգ գույնի միներալներից ամֆիբոլներից և բիոտիտից: Գրանոդիորիտները ընդհանուր առմամբ բնորոշվում են համասեռ ստրուկտուրայով, մաքուր են և չեն պարունակում քսենոլիտներ:

Գաբրոների խմբի ապարներից առավել դեկորատիվ են լաբրադորիտները իրիզացնող լաբրադորի բյուրեղներով: Բարձր դեկորատիվություն ունեն գաբրոների բոլոր այն տարատեսակները, որոնք տարածված են Մեղրիի բաթոլիտի արևելյան մասում, Բարգուշատում (Գեղիի զանգվածի առաջին օղակի ինտրուզիվը, Արամագղի զանգվածը, Արևիսի գաբրոիդների ելքերը): Գաբրոիդները սև, մուգ մոխրագույն, մուգ կանաչավուն երանգով խոշորահատիկ ապարներ են կազմված պիրոքսեններից և կանաչավուն-մոխրագույն պլազիոկլազի բյուրեղներից: Նույնքան դեկորատիվ են նաև մանրահատիկ, հավասարաչափ-հատիկային գաբրոիդները և տրոկտոլիտները (Սվարանցի զանգվածի սահմաններում և Մեղրիի բաթոլիտի տարածքում): Գաբրոները կարող են օգտագործվել և արտաքին, և՛ ներքին երեսապատման համար, որտեղ պահանջվում է բարձր գեղարվեստական ծեփորում (կառավարական և հասարակական շենքերի դահլիճներ, սրահներ, հյուրա-

նոցներ, մշակույթի պալատներ և այլն):

Մեղրի-Բարգուշատ տարածքի ինտրուզիվ մարմինների մեծ չափերը (տասնյակ և հարյուրավոր քառակուսի կիլոմետրեր մակերեսով), մագմատիկ անջատման ճեղքերի առկայությունը (երկայնակի, լայնակի և հարթային-շերտային) թույլ են տալիս անհրաժեշտության դեպքում գտնել և ընտրել ցանկացած գույնի, տեսքի, ամրության, չափի քարային հումք կիրառման ոլորտների պահանջներին համապատասխան:

Գրանիտանման ապարները շատ քիչ են գիջում ամենամուր և կարծր քարատեսակներին՝ կվարցիտներին, իրենց ամրությամբ, դիմացկունությամբ ամենածայրահեղ ջերմաստիճանների պայմաններում: Հավասարաչափ կարող են օգտագործվել և՛ ներքին հարդարման համար, և՛ արտաքին պատերի երեսապատման համար պաշտպանելու մթնոլորտային ազդեցություններից և գեղեցիկ արտաքին տեսք տալու համար, ինչպես նաև օգտագործվել որպես շարվածքի շինաքար ջերմության և ջրի մակարդակի տատանումներով բնորոշվող ծովափնյա, գետափնյա և ամբարտակների պատնեշների, կամուրջների խարիսխների շինարարության մեջ (Մապյուկ, 1996; Буханов, 1998):

Մեր քարարդյունահանող արտադրությունը օգտագործել է կամ օգտագործում է ոչ բոլոր ինտրուզիվ դեկորատիվ-երեսապատման քարատեսակների հումքը, որոնցով հարուստ է Հայաստանը, բացառությամբ Փամբակի կվարցային դիորիտների և գրանոդիորիտների (մանրահատիկ և միջահատիկ բաց և մուգ մոխրագույն ապարներ): Այս ապարներն ունեն լավ շինարարական որակներ շնորհիվ բարձր ամրության, թարմության, ցածր խոնավության, կվարցի բարձր և բիոտիտի ցածր պարունակության (Геология АрмССР, 1966): Փամբակի գրանիտներով սալապատված է Երևանի մետրոյի կայարանների մեծամասնությունը:

Բնական դեկորատիվ-երեսապատման ինտրուզիվ ապարները շատ դեպքերում (մասնավորապես հատակների երեսապատում) ավելի արդյունավետ են և հուսալի, քան ավելի էժան, նվազ դիմացկուն նյութերը (տուֆ, բազալտ, մարմար): Մոսկովյան մետրոյի փորձը թույլ տվեց հաստատելու, որ գրանիտանման ապարներից սալապատված հատակն ունի կիրառելիության անսահմանափակ ժամկետ: Տեղական բնական դեկորատիվ-երեսապատման ինտրուզիվ ծագման քարերի մասսայական կիրառման համար պնդումը արվում է հետևյալ նկատառումներով:

1. Դեկորատիվ-երեսապատման բազմատեսակ քարերով արտակարգ հարուստ Հայաստան ներմուծել դեկորատիվ քարեր նախատակահարմար չէ և որևէ արդարացում չունի մանավանդ տնտեսական առումով մի երկրում, որն ունի բացասական հաշվեկշիռ արտաքին առևտրի մեջ:

2. Հայաստանի տարածքը հարուստ է տարբեր գույներ, ստրուկտուրային-տեքստուրային հատկանիշներ, բարձր ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներ ունեցող դեկորատիվ գրանիտոիդային և գաբրոիդային ապարներով:

3. Չանգեզուրը հարուստ է սև և մուգ գույնի տարբեր հատիկայնության և ստրուկտուրային գաբրոանման ապարներով, որոնք ունեն բարձր շինարարական և դեկորատիվ որակներ: Մինչդեռ

արտերկրներից ներմուծվող նման քարեր կիրառվում են շինարարության մեջ արտաքին և ներքին հարդարման համար:

4. Դեկորատիվ-երեսապատման քարերի արդյունահանումը Հայաստանում ընդհանուր առմամբ արվում է ոչ ինդուստրիալ եղանակներով, սահմանափակ տեսականիով և ոչ մեծ ծավալներով, որի հետևանքով պահանջարկը առ այսօր ծածկվում է ներմուծման հաշվին այլ երկրներից:

5. Նկատի ունենալով, որ Հայաստանում որպես երեսապատման քարեր մասսայականորեն օգտագործվող բազալտներին, տուֆերին, մարմարներին և տրավերտիններին փոխարինելու են եկել վերջին տարիներին առավել դեկորատիվ և քանկարժեք քարերը, այս քարերի պահանջարկի շեշտակի աճը և նրա ապահովումը ներմուծման հաշվին, հրամայական է դառնում դեկորատիվ-երեսապատման քարերի ինդուստրիալ բազայի ստեղծումը տարբեր քարաշատ շրջաններում՝ Զանգեզուր, Փամբակ, Լոռի:

6. Մեղրի-Բարգուշատ տարածքի ինտրուզիվ զանգվածները կարող են ապահովել անսահմանափակ քանակության բազմաթիվ և որակյալ հումք ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայի համար:

7. Դեկորատիվ քարերի օգտագործման և մշակման նոր ծաղկումը երկրում կապ չունի տեղական բնական քարային հումքի արդյունահանման և մշակման հետ: Բնական դեկորատիվ քարերի մեծ մասը ներմուծվում է:

8. Բարձր դեկորատիվ հատկանիշներով օժտված որոշ ինտրուզիվ ապարներ հանքանյութեր են՝ նեֆելինային սիենիտներ, տուրմալինային գրանիտներ, մագնետիտային գաբրոներ, պիրոքսենիտներ, տրոկտոլիտներ և մագնետիտային օլիվինիտներ: Նման ապարների կիրառումը շինարարության մեջ պետք է բացառվի:

9. Զարարդյունահանող և քար մշակող արդյունաբերության մակարդակով Հայաստանը գրավում է աշխարհում առաջնակարգ տեղերից մեկը, եթե նկատի ունենանք հրաբխային տուֆերի և բազալտների կիրառումը որպես շինաքար և դեկորատիվ-երեսապատման քար: Իսկ ինտրուզիվ ծագման դեկորատիվ քարերի արտադրությամբ և կիրառմամբ նույնը չի կարելի ասել, թեև երկիրը արտակարգ հարուստ է նաև այդ հումքով: Հայաստանում կարող են արտադրվել դեկորատիվ-երեսապատման քարերի մի քանի տասնյակ տարատեսակ ըստ գույների, կազմի, ստրուկտուրային-տեքստուրային հատկանիշների և ընդհանուր տեսքի (գրանիտներ, գրանոդիորիտներ, կվարցային դիորիտներ):

10. Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել լուրջ ծրագրեր դեկորատիվ-երեսապատման

քարերի արդյունաբերության զարգացման համար: Հարկ է կառուցել քարամշակող խոշոր կոմբինատներ Մեղրիի և Բարգուշատի ինտրուզիվ զանգվածների գրանիտոիդների, գաբրոիդների և մոնցոնիտոիդների բազայի հիման վրա: Արմատապես պետք է փոխել բարձրարժեք դեկորատիվ-երեսապատման քարերի արդյունաբերության վիճակը տեխնիկական զինվածության և քարային հումքի արտադրական ծավալների մեծացման և դեկորատիվ քարերի բազմազանության առումով ապահովելու համար որակյալ քարային նյութով ոչ միայն ներքին շուկան, այլ արտահանելու ուրիշ երկրներ: Հայաստանը ունի այդ հնարավորությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Адамян А.И.. Интрузивные породы Мегринского плутона. В кн.: Геология Армянской ССР, т. III. Петрография. Ереван: Изд. АН АрмССР, 1966, с. 7-92.
- Баласаян С.И. Магматические формации Армянской ССР. Ереван: Изд. ЕГУ, 1975, 216 с.
- Белков Б.П., Григорович М.Б., Петров В.П., Шаболов С.П. Природные каменные облицовочные материалы. В кн.: "Неметаллические полезные ископаемые". М.: 1975, 122 с.
- Бужанов Ю.В. Добыча и переработка минерального сырья для промышленности строительных материалов. Строительные материалы, 1998, N3, с. 2-5.
- Гукасян Р.Х., Меликсетян Б.М. Об абсолютном возрасте и закономерностях формирования сложного Мегринского плутона. Изв. АН АрмССР, Науки о Земле, 1965, т. XVIII, №3-4, с. 8-26.
- Гюмджян О.П. Магматические плутонические формации Западного Баргушата. Изв. АН АрмССР, Науки о Земле, т. XXVI, №1, 1973, с. 52-55.
- Карамян К.А., Таян Р.Н., Гюмджян О.П. Основные черты интрузивного магматизма Зангезурского рудного района Армянской ССР. Изв. АН АрмССР, Науки о Земле, 1974, т. XXVII, №1, с. 54-65.
- Лашук В.В. Долговечность облицовочного камня Кольского полуострова. Кольский научный центр, 1996, 138 с.
- Лашук В.В., Усачева Т.Т. Изучение зависимости обрабатываемости от минерального состава, структуры и физико-механических свойств гранита месторождения Кузряка. Кольский научный центр, 1996, с. 14-16.
- Мкртчян С.С., Карамян К.А., Аревшатян Т.А. Каджаранское медно-молибденовое месторождение. Геологическое строение, структура и условия формирования. Ереван: Изд. АН АрмССР, 1969, 328 с.

МИНЕРАЛОГО-ПЕТРОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ИНТРУЗИВНЫХ ПОРОД ЗАНГЕЗУРА И ОБЛАСТИ ИХ ПРИМЕНЕНИЯ

О. П. Гуюмджян, А. А. Авакян

Резюме

В статье дана характеристика петрографического состава, магматической трещиноватости интрузивных каменных материалов Мегри-Баргушатского магматического узла, освещаются вопросы промышленного использования интрузивных пород Зангезура в качестве декоративно-облицовочного камня. Отмечается, что крупнейшие месторождения декоративного камня Зангезура не разрабатываются, несмотря на весьма широкое применение в строительстве импортируемых облицовочных плит. Плиты, получаемые из интрузивных пород Зангезура, исключительно декоративные. В связи с возрастающим спросом на декоративно-облицовочный камень, необходимо развернуть на индустриальной основе работы по эксплуатации местного сырья не только для нужд страны, но и для экспорта.

INTRUSIVE ROCKS OF ZANGHEZOUR AS HIGH-QUALITY DECORATIVE FACING SLABS

H. P. Gouyumjyan, A. A. Avagyan

Abstract

The article provides description of highly decorative and diversely colored intrusive rocks located within the magma node of Meghri-Bargoushat, and of their petrographic composition, structural and textural features, and magma fracturing. It spreads light on the issues of industrial processing of the intrusive rocks of Zanghezour for the purpose of production of decorative and facing slabs.